ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 14» ապրիլի 2019 թվականի N 7

ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը ներկայացրեց համայնքի 2019թ. բյուջեի կատարման ցուցանիշները առ. 01-04-2019թ. դրությամբ, հազար դրամ.

Հ/Հ	Եկամտատեսակ	Նախատեսված տարեկան	Նախատեսված եռամսյա	Փաստացի	Կատարման %-ը
1.	Գույքահարկ	4320.0	1080.0	941.7	87
2.	Հողի հարկ	3695.6	923.9	439.3	47
3.	Հողի վարձավճար	1402.1	350.5	-	-
4.	Տեղական տուրքեր	150.0	37.5	52.1	139
5.	Տեղական վճար	2700.0	675.0	-	-
6.	Ընդամենը սեփական եկամուտներ	12267.7	3066.9	1433.1	47
7.	Դոտացիա	53191.2	13297.8	13297.8	100
	Ընդամենը	65458.9	16364.7	14730.9	90

Արտահայտվեցին համայնքի ավագանու անդամներ՝, Հ. Ասատրանը, Գ. Մանուկյանը, Ռ.Ռուբենյանը:

Նրանք ներկայացրեցին առաջարկություններ համայնքի բյուջեն սահմանված համամասնություններով ըստ հարկատեսակների կատարելու համար՝ Հ.Ասատրյանը առաջարկեց համայնքապետարանից տեղեկանքներ տրամադրել հարկատուների կողմից հարկային պարտականությունները կատարելուց հետո, Գ.Մանուկյանը առաջարկեց բոլոր հարկատուներին ծանուցել հարկային պարտքերի չափի մասին, բացատրական աշխատանքներ տանել և պահանջել ըստ ժամանակացույցի վճարել հարկերը, Ռ. Ռուբենյանը առաջարկեց օրենքով սահմանված լծակները կիրառել խոշոր հարկային պարտքեր ունեցող հարկատուների նկատմամբ:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 84-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

1.Հաստատել համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի կողմից համայնքի ավագանուն ներկայացրած համայնքի բյուջեի 2019թ. առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումը:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմին՝ ամենօրյա աշխատանքներ տանել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը սահմանված եռամսյակային համամասնություններով ըստ առանձին հարկատեսակների ապահովելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ՝

ա.Աշխատակազմի քարտուղար Ա.Հովհաննիսյանին և առաջին կարգի մասնագետ(համակարգչային օպերատոր) Ա.Սիմոնյանին - բոլոր տեսակի տեղեկանքները տրամադրել միայն հարկային պարտականությունները կատարելու պայմանով:

բ.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետներ Ա.Ավետիսյանին և Ա.Գասպարյանին – բոլոր հարկատուներին ծանուցել հողի հարկի և վարձակալության գումարի չափի մասին, բացատրական աշխատանքներ տանել և պահանջել մարել պարտքերը՝ ցուցաբերելով յուրաքանչյուրի նկատմամբ անհատական մոտեցում, ամբողջությամբ կամ մասամբ կատարելու հարկային պարտականությունները:

գ. Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Ղրիմյանին - օրենքով սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել խոշոր հարկային պարտքեր ունեցող և հարկային պարտականությունից խուսափող հարկատուների նկատմամբ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (4)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ		
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ		
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ		
ՌՈՒԲԵՆ ԴՈՒԲԵՆՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 14» ապրիլի 2019 թվականի N 8

<<ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետերի , 34-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Հաշվի առնելով,որ մանկապարտեզում 2019 թ.-ին գործում են երեք խմբեր, համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ.Քոչարյանի առաջարկությանը և կատավել <<Կարճաղբյուր գյուղի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ աշխատակիցների հաստիքային միավորի և պաշտոնային դրույքաչափի փոփոխություն՝

1. Խոհարար՝ հաստիքային միավորը – 0.55, պաշտոնային դրույքաչափը-63250ՀՀ դրամ,
2. -//- օգնական՝ -//- 0.55, -//- 63250 ՀՀ դրամ,
3. Դռնապան՝ -//- 0.6 -//- 69000 ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է՝

Կողմ-4, Դեմ-0, Ձեռնպահ-0:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ռ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՔՈՉԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 14 » ապրիլի 2019 թվականի N 9

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի, 42-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համայնքում կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
2.Համայնքում աղբահանության համար կրկին հայտարարել մրցույթ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (4)
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ